Կոնդակ Տարտանէլի Դիոնէսիոս աւագ քահանայ Տրէզեանի անունով, որով նրան համաձայն նոյն կրօնական ժողովի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 18 յունիսի, թ. 923։

---

## ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

1 մայիսի, թ. 198. Սինօդը՝ լսելով Տփխիսի քաղաքագլխի այս տարուայ մարտի 18-ի, № 914 գրութիւնը՝ Մեծ-Իշխանուհի Օլգա Թէոդորովնային Տփխիսում արձան կանգնեցնելու համար նուիրատուութիւններ ժողովելու մասին, որոշեց ուղարկել Տփխիսի քաղաքային վարչութեան Մայր Աթոռի միջոցներից յիսուն ռուբլի։

1 մայիսի, թ. 195. Սինօդս՝ լսելով Ներսիսեան դպրոցում տեղի ունեցած դրամական զեղծումների վերաբերեալ գործի զեկուցումը և ի նկատի ունենալով, որ յանցաւոր դանձապահը արդէն յանձնուած է մարմնաւոր իշխանութեան դատին, իսկ կառավարիչ Գասպարեանը հրաժարեցուած է, որոշեց կարճել Սինօդումս այս գործը։

1 մայիսի, թ. 197. Սինօդը՝ լսելով նախկին դատախազ Լ. Ֆրէնկէլից Վաղարշապատի վանքապատկան տան 555 ռուբ. 16 կոպ. ապառիկ վարձագրամի պահանջման վերաբերեալ գործը և ի նկատի ունենալով, որ հակառակ Սինօդի բոլոր ջանքերի երևան չեկաւ Ֆրէնկէլի բնակութեան տեղը, որի պատճառով հնարաւորութիւն չկայ պահանջելու նրանից դատարանի միջոցով նրա պարտքը, որոշեց կարճել այս գործը։

3 մայիսի, թ. 204. Սինօդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի անցած տարուայ օգոստոսի 28-ի, № 3979 յայտարարութիւնը՝ Բորչալուի գաւառի Կուրդան գիւղի բնակիչ Սարգիս Տէր-Յարութիւնեանցին նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց, թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել Սարգիս Տէր Յարութիւնեանին

հոգևոր կոչման մէջ և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Կուրդան գիւղի համար։

3 մայիսի, թ. 207. Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 1-ի, № 890, յայտարարութիւնը՝ Աղէքսանդրոպոլի գաւառի Նորաշէն գիւղացի Յովհաննէս Աւետիսեանին Բարչալուի գաւառի Դամիա գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց թոյլ տալ յիշեալ կոնսիստորիային Յովհաննէս Աւետիսեանին ընդունել հոգևոր կոչման մէջ և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Դամիա գիւղի համար։

8 մայիսի, թ. 208. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 26-ի, № 674 կոնդակը՝ Սուրբէն աբեղայ Թորոսեանին Ամարասու վանքի վանահայր կարգելու մասին, որոշեց. նախ՝ պատուիրել Սուրբէն աբեղային գնալ Ամարասի վանքն իբրև միաբան և, երկրորդ, յայտնելով այդ մասին Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչին, պատուիրել ստանալ նահանգապետի հաճութիւնը Սուրբէն աբեղային վանահայր նշանակելու մասին, և նահանգապետի պատասխանը յայտնել Նորին Սրբութեան՝ յիշեալ աբեղային վանահայրութեան պաշտօնում հաստատելու համար։

8 մայիսի, թ. 209. Սինոդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի գիւանատան այս տարուայ ապրիլի 9-ի, № 10217, գրութիւնը, որով առաջարկում է Դանձակի 2-րդ քաղաքամասին կից գաղութում (հայ Կովալեօվկա) շինուելիք աղօթատան յատակագծի և նախահաշուի մասին եղրակացութիւն յայտնել, որոշեց պատուիրել բոլոր կոնսիստորիաներին և նոցա միջոցով ենթակայ հոգևոր կառավարութիւններին, որպէս զի եկեղեցիների և աղօթատների շինութեան և վերաշինութեան յատակագծերը ներկայացնեն ոչ թէ անմիջապէս նահանգական իշխանութիւններին, այլ օր. XI հատ. 1 մ. 1141 յօդ. 4 կ. և 1145 յօդ. համաձայն Սինոդիս նախնական քննութեան։

8 մայիսի, թ. 211. Սինոդը՝ լսելով Երևանի կոնսիս-

տորիայի այս տարուայ յունուարի 31-ի, № 589, յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Ղարաջորան գիւղացի Ներսէս Մուշեղեանին նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. յարգելով կոնսիստորիայի միջնորդութիւնը և անհիմն գտնելով Ղարաջորանցիներից ոմանց բողոքը, թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Ներսէս Մուշեղեանին և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Ղարաջորան գիւղի համար։

10 մայիսի, թ. 216. Սինոդը՝ լսելով Ն. Գ. պ. Նախարարի այս տարուայ ապրելի 22-ի, № 3981 գրութիւնը, որով թոյլ է տրւում ընդունել հայ եկեղեցու ծոցը Խարկովի վերաբնակիչ հրէայ Էյլը Սկլովսկուն և իւր փոքրահասակ աղջկան, որոշեց. պատուիրել Ատարախանի կոնսիստորիային կարգադրել մկրտել յիշեալ անձնաւորութեանց հայ եկեղեցու ծիսով, ճշտութեամբ պահպանելով օրէնքով սահմանուած կարգը։

10 մայիսի, թ. 218. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեամբ Սինոդի տնօրինութեան յանձնուած Ղարաբաղի կոնսիստորիայի այս տարուայ յունուարի 14-ի, № 133, յայտարարութիւնը Կարկաժան գիւղի Իգնատիոս քհնյ. Տէր-Գրիգորեանին քահանայագործութիւնից ազատ կացուցանելու մասին, որոշեց. պատուիրել Ղարաբաղի կոնսիստորիային, նախ, կարգադրել վերահաստատել Կարկաժան գիւղում իբրև ծխատէր քհնյ. Իգնատիոս Տէր-Գրիգորեանին, թոյլ տալով մինչև նրա ապաքինուելը, նրա փոխարէն քահանայագործել Ղայբալու գիւղի քահանային և, երկրորդ, խիստ կերպով հսկել քահանայի վերայ և ապագայում եկեղեցական կանոնի պահանջներից որևէ շեղում անելու դէպքում ենթարկել նրան ամենախիստ պատասխանատուութեան։

13 մայիսի, թ. 221. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ 1912 թ. դեկտեմբ. 20-ի օրէնքի համաձայն հողերի յետգնման համար կարգուած յատուկ ցանձնաժողովը կա-

րիք կարող է ունենալ բողոքելու Էջմիածնի գաւառի IV մասի Հաշտար. Միջնորդի կարգադրութիւնների և Երևանի նահանգ. Շինական Ատեանի վճիռների դէմ, որոշեց նոտարական հաւատարմագրով լիազօրել Սինոդի անդամ և նոյն յանձնաժողովի նախագահ Տ. Մատթէոս վարդապետին կարևոր դէպքերում Սինոդի կողմից բողոքել Հաշտ. Միջնորդի կարգադրութիւնների դէմ, ներկայ լինել Երևանի նահ. Շինար. Ատեանում, գրաւոր և բանաւոր բացատրութիւններ ներկայացնել այդ Ատեանին և բողոքել վերջնի վճիռների դէմ՝ յետգնման օրէնքի իրականացման հետ կապուած բոլոր խնդիրների վերաբերմամբ։

13 մայիսի, թ. 225. Սինոդը՝ լսելով Մ. Աթոռին ենթակայ հաստատութիւնների նախահաշիւների հաստատելու վերաբերեալ գործը, որոշեց. պատուիրել թեմ. առաջնորդներին կարգադրել իրենց ենթակայ թեմական դրպրոցական հաստատութիւններին, որ թեմական դպրանոցների նախահաշիւները ներկայացնեն Սինոդիս ոչ ուշ, քան ուսումնական տարուայ սկզբից երկու ամիս առաջ, իսկ թեմական այլ հաստատութիւններին՝ որ նախահաշիւները ներկայացնեն մինչև հոկտեմբերի 1-ը։ Միաժամանակ պատուիրել կոնսիստորիային, որ ենթակայ պաշտօնական անձանց ռոճիկների յաւելման հարց յարուցանելու դէպքում Սինոդում առանձին պատճառաբանուած միջնորդութիւն յարուցանեն, նախահաշուից դուրս։

15 մայիսի, թ. 228. Սինոդը՝ լսելով Կովկասի տ. Փոխարքայի այս տարուայ ապրիլի 29-ի, № 11679, գրութիւնը՝ Փոթիի հայոց եկեղեցու շինութիւնն աւարտելու համար նուէրներ ժողովելու թոյլտուութեան մասին, որոշեց. ուղարկել տ. Փոխարքայի գրութեան պատճէնը Վրաստանի կոնսիստորիային և պատուիրել ուղարկել Փոթիի հոգաբարձութեան նուիրատուութեան համար ժապաւինեալ մատեան՝ գրելով նոյն մատեանի առաջին երեսի վրայ տ. Փոխարքայի թոյլտուութեան պատճէնը և թոյլ տալ սկսել հանգանակութիւնը։

15 մայիսի, թ. 229. Մինոգը՝ լսելով Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը Էջմիածնի գաւ. Ղազնաֆար գիւղացի Արամ Տէր-Դանիէլեանին նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Նորին Սրբութեան մակագիր հրամանի համաձայն բաւարար համարելով ընծայացու Տէր Դանիէլեանի Բ. դասարանի առարկաների և ձայնագրութեան վկայականները, թոյլ տալ կոնսիստորիային ընդունել նրան հոգևոր կոչման մէջ և պատուիրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Ղազնաֆար գիւղի համար, որ ունի 120 տուն։

17 մայիսի, թ. 234. Մինոգը՝ լսելով Բեսսարաբիայի կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 2-ի, № 721 յայտարարութիւնը, որով խնդրում է հրահանգ ամուսնութիւնից առաջ ծնուած երեխաների ծնունդն արձանագրելու համար, որոշեց. պատուիրել կոնսիստորիային, նախ, ամուսնութիւնից առաջ ծնուած երեխային ցուցակագրել որպէս արտաքոյ ամուսնութեան ծնուած (внѣбрачное дитя). Հոր (отчество) անուան տեղ գրել կնքահօր անունը, իսկ ազգանուան տեղ՝ (фамилія) մօր ազգանունը, եթէ մայրը և սրա հայրը համաձայն են. երկրորդ, կարգադրել ստորադրեալ պաշտօնեաներին նման դէպքերում առաջնորդուել օր. X հտ. 1 մ. 132, 132¹-³ և 144¹ յօդուածներով։

20 մայիսի, թ. 243. Մինոգը՝ լսելով Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը Նոր-Բայազէտի գաւառի Ցամաքաբերդ գիւղի բնակիչ Թաչատուր Տէր-Մովսէսեանին Հին-Նախիջևանի գաւ. Գեազ (Գեազ-Ջաւաջուռ) գիւղի համար քհնյ. ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ կոնսիստորիային ընդունել Թաչատուր Տէր-Մովսէսեանին հոգևոր կոչման մէջ, և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քհնյ. յիշեալ գիւղի վրայ։

24 մայիսի, թ. 253. Մինոգը՝ լսելով Շամախու կոնսիստորիայի միջնորդութիւնը Մատրասա գիւղի բնակիչ Եփրեմ Տէր-Մարտիրոսեանցին նոյն գիւղի համար քհնյ. ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Շամախու կոն-

սիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Մատրասեցի Եփրեմ Տէր Մարտիրոսեանին, և առաջադրել Շամախու թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։

24 մայիսի, թ. 254. Սինոդս Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Արմաւիրի ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութեան 5000 ռուբլի ծախսել նոյն եկեղեցու գրամագլխից նորակառոյց եկեղեցու շինութիւնը աւարտելու համար։

24 մայիսի, թ. 255. Սինոդը Նորին Սրբութեան այս տարուայ մայիսի 20-ի, № 791 մակագիր պատուէրի համաձայն որոշեց. տալ Տպագրութեան 400 ամեայ Յոբելեանի Մ. Աթոռի Ցանձնաժողովին 600 ռուբլի յոբելենական հրատարակութիւնների ընթացիկ ծախքերի համար։

27 մայիսի, թ. 257. Սինոդը՝ լսելով Աստրախանի կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 4-ի, № 1185, յայտարարութիւնն այն մասին, թէ Տփխիսի պրաւոսլաւ Սինոդական Կոնտորան անվաւեր է համարել Բագուաբնակ Վարդան Տէր Ներսիսեան և պրաւոսլաւ Եւդոկիա Սելչէնկոյի՝ Սամարղանդի հայոց աղօթատանը, հայ քահանայի ձեռքով, կատարուած պսակը, որոշեց. օր. X հտ. 1 մ. 67 յօդ. 3 կէտի և 72 յօդ. համաձայն Տէր-Ներսիսեան ամուսինների պսակը համարել չեղեալ, և պատուիրել Աստրախանի կոնսիստորիային համապատասխան ծանօթութիւն դնել չափաբերական մատեանի մէջ։

31 մայիսի, թ. 264. Սինոդը Վրաստանի հ. Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Թելաւ քաղաքի բնակիչ Յովսէփ Վախտանգեանին, և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Սղնախի գաւ. Մուկուչան և Ախաչէն գիւղերի վրայ։

3 յունիսի, թ. 275. Սինոդը՝ լսելով Ղազախի գաւառի Դուեղ գիւղի ծխական հոգաբարձութեան խնդիրը՝ ս. Սար-

գիս ուխտաւորդու արդիւնքը նրանց դպրոցի պէտքերին յատկացնելու մասին, որոշեց. Վրաստանի կոնսիստորիայի եղրակացութեան համեմատ յիշեալ ուխտաւորդու արդիւնքը յատկացնել Դուեղ գիւղի ծխական դպրոցին, փոխանակ Բարանա գիւղի ուսումնարանին տալու, որ գաւառի ամենահարուստն է։

Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի Սինոդիս լուան զեկուցում. Սինոդումն քննուեց յատուկ յանձնաժողովի կազմած հոգևոր պաշտօնեաների ճանապարհածախքերի և օրապահիկների նախագիծը, որի բովանդակութիւնը հետևեալն է.

Ա. Առաջնորդներ և Սինոդի անդամներ.

Առաջնորդները և Սինոդի անդամները, եթէ որ և է յանձնարարութեամբ հարկադրուած են ճանապարհորդութեան ելնել և երբ իրենց վիճակում (առաջնորդները) շրջագայութեան են դուրս գալիս՝ ստանալու են.

ա) Երկաթուղիով գնալիս՝ մէկ I կարգի և մէկ III կարգի տոմսի արժէքը և օրական 4 ռ. այնքան օրուայ համար, որքան օրուայ պիտանի է տոմսը։

բ) Խճուղիով գնալիս՝ 6 ձիու վարձ (վերստին 18 կ.) և օրական 4 ռ., օրը հաշուելով 60 վերստ ճանապարհ։

Առաջնորդներն և Սինոդի անդամներն օրապահիկ (սնունդ և բնակարանի վարձ) ստանում են—մայրաքաղաքներում՝ 10 ռ., կենտրոնական մեծ քաղաքներում (օր. Տփխիս, Բագու, Օդեսսա և այլն) 5 ռ., իսկ նահանգական և գաւառական քաղաքներում և այլ տեղերում 4 ռ.։

Ծանոթ. 1. Եթէ առաջնորդներն և Սինոդի անդամները պաշտօնական գործով գնում են որ և է տեղ և համայնքը կամ եկեղեցին վճարում է նոցա ճանապարհածախքը, բնակարանի վարձը և սնունդը, նոքա առանձին ճանապարհածախք և օրապահիկ չեն ստանում։ Չեն ստանում վերոյիշեալ ծախքերը նաև այն ժամանակ, երբ հրաւիրուում են հոգևոր պաշտօն կատարելու։

2. Առաջնորդին կամ Սինոդի անդամին ի պաշտօնէ ուղեկցող պաշտօնեան ստանում է իւր աստիճանի (չին) և սոյն ցուցակի մէջ նշանակուած իրեն համապատասխան ճանապարհածախքն ու օրապահիկը: Առաջնորդին ուղեկցող գործակալ քահանան իւր շրջանի մէջ չի ստանում օրապահիկ և ճանապարհածախք:

Բ. Եպիսկոպոսներ, փոխանորդներ, Կոնսիստորիայի նախանդամ վարդապետներ և Մայր Աթոռի հաստատութիւնների նախագահներ.

Եպիսկոպոսները, փոխանորդները, Կոնսիստորիայի նախանդամ և Մայր Աթոռի հաստատութիւնների նախագահ վարդապետները յանձնարարութիւններ կատարելիս ստանում են.

ա) Երկաթուղիով գնալիս մէկ 1 կարգի տոմսի արժէքը և օրական 3 ռ. ըստ տոմսում նշանակուած օրերի:

բ) Թաղուղիով գնալիս՝ 4 ձիու վարձ (վերստին 12 կ.) և օրապահիկ 3 ռ., օրը հաշուելով 60 վերստ:

Սոքա օրապահիկ ստանում են մայրաքաղաքներում 5 ռ., մեծ քաղաքներում՝ 4 ռ., իսկ Ծնացեալ տեղերում 3 ռ.:

*Ծանօթ.* Փոխանորդները իրենց փոխանորդութեան մէջ շրջագայելիս օրապահիկ չեն ստանում: Չեն ստանում նաև ճանապարհածախք այն դէպքերում, երբ հրաւիրուում են հոգևոր պաշտօն կատարելու:

Գ. Անպաշտօն վարդապետներ, Կոնսիստորայի անդամ քահանաներ և Հոգևոր Կառավարութեան նախագահող քահանաներ.

Եթէ յատուկ յանձնարարութեամբ հարկ է լինում անպաշտօն վարդապետին, Կոնսիստորիայի անդամ քահանային կամ Հոգևոր Կառավարութեան նախագահող քահանային ուղարկել որ և է պաշտօնական գործի, ստանալու են.

ա) Երկաթուղիով գնալիս՝ մէկ 1 կարգի տոմսի արժէք և օրական 1 ռ. 50 կ. ըստ տոմսակի օրերի:

բ) Թաղուղիով գնալիս՝ 3 ձիու վարձ (վերստին 9 կ.) և

օրական 1 ռ. 50 կ., օրը հաշուելով 60 վերստ։

Սոքա օրապահիկ ստանալու են քաղաքներում 2 ռ., իսկ գիւղերում օրապահիկ չեն ստանալու։

Դ. Հոգևոր Կառավարութեան անդամներ, գործակալներ և այլ սրբազնագործ պաշտօնեաներ.

Սոքա որ և է յանձնարարութեամբ տեղ գնալիս ստանալու են՝

ա) Երկաթուղիով գնալիս մէկ II կարգի տոմսի արժէքը և օրական 80 կ. ըստ տոմսի։

բ) Խճուղիով գնալիս՝ 2 ձիու վարձ (վերստին 6 կ.) և օրական (60 վերստին) 80 կ.։

Սոքա քաղաքներում ստանում են օրապահիկ օրական 1 ռ., իսկ գիւղերում չեն ստանում։

Ե. Աշխարհական պաշտօնեաներ։

Հոգևոր հաստատութիւնների մէջ պաշտօնավարող աշխարհական պաշտօնեաները, եթէ որ և է յանձնարարութեամբ պիտի տեղ գնան, նոքա ճանապարհածախք և օրապահիկ ստանում են իրենց աստիճանի (չին) համեմատ պետական օրէնքով սահմանուած չափով։

Զ. Նոր պաշտօնի գնացող կամ պաշտօնից հեռացողներ։

Նոր պաշտօնի նշանակուող կուսակրօն հոգևորականը, եթէ բարձր պաշտօն է ստանում, նա իւր պաշտօնատեղին գնալիս ստանալու է ճանապարհածախք և օրական սնունդի համար, իւր նոր պաշտօնի համապատասխան, համաձայն սոյն ցուցակի։ Իսկ իրերի փոխադրութեան համար 15 փութ իրի ճանապարհածախք։

Պաշտօնից արձակուելու դէպքում նա ստանում է իւր նախկին պաշտօնի համապատասխան ճանապարհածախքն ու օրական սնունդի դրամը և 15 փութ իր փոխադրելու ծախքը։ Հրամայեցին. Հաստատել առաջնորդների, Սինոդի անդամների և հոգևոր վարչութեան այլ հոգևորական կամ աշխարհական պաշտօնեաների ճանապարհածախքերի և օրապահիկների այն չափը, ինչպէս որ որոշել է Սինոդիս յանձնարարութեամբ կազմուած Մասնաժողովը։ Բացի դորանից պատուիրել թեմական առաջ-

նորդներին. 1) որ առաջնորդանիստ քաղաքներից պաշտօնական գործով դուրս գալիս յայտնեն Սինոդիս, թէ երբ, ուր և ինչ նպատակով են գնում. 2) վերադառնալիս յայտնեն, թէ երբ վերադարձան, ներկայացնելով, համաձայն XI հատ. 1 մ. 1181 յօդ., մանրամասն զեկուցում թեմում կատարած շրջագայութեան և կարգադրութիւնների մասին, անկախ նոյն օրէնքի 1182 յօդուածով պահանջուող տարեկան ընդհանուր տեղեկագրից՝ թեմի գործերի մասին, և գ) համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել առաջնորդներին և հոգևոր այլ պաշտօնեաներին, որ պաշտօնական գործերով շրջագայելիս արած բոլոր ծախքերի հաշիւը կանխօրէն ներկայացնեն Սինոդ ի հաստատութիւն, որից յետոյ Սինոդս կը կարգադրէ Կոնսիստորիաներին, որ վճարեն արած ծախքերը։ Այս մասին հրամանագրել թեմական առաջնորդներին և Կոնսիստորիաներին և վերջիններիս միջոցով Հոգևոր Կառավարութիւններին։ Օրագրիս քաղուածքը տպագրել «Արարատ» ամսագրում։ 8 յունիսի 1912 թ. Ս. Էջմիածին։ № 1481.

Սինոդի Անդամ Բարգէն վարդապետ
Կ. պ. Ատենադպրի Ա. Խոնդկարեան
Ի տ. Գործավարի Ա. Հայկազունի

12 յունիսի, թ. 304. Սինոդը՝ լսելով Ներքին Գործոց պ. Նախարարի անցած մայիսի 22-ի, № 5086 գրութիւնը, որով թոյլ է տրուում Լևոն Էլիմիրզովի Տփխիսի Կուսանաց վանքին կտակած 100 ռուբլին ընդունել նոյն վանքի օգտին, որոշեց. պ. Նախարարի գրութեան պատճէնն ուղարկելով Վրաստանի հ. կոնսիստորիային, պատուիրել ստանալ կտակած մի հարիւր ռուբլին և յանձնել Կուսանաց վանքի վարչութեան։

12 յունիսի, թ. 305. Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ յունիսի 7-ի, № 854, մակագրութիւնը Երևան քաղաքի բնակիչ Կարապետ Յարութիւնեանին Մայր

Աթոռի կուսակրոն հոգևորականների շարքն ընդունելու մասին, որոշեց. համաձայն Վեհափառ Հայրապետի մակագրութեան ընդունել Երևանի բնակիչ Կարապետ Ցարուբիանեանին հոգևոր կոչման մէջ և համարել նրան Մայր Աթոռի միաբան։

14 յունիսի, թ. 311. Սինոդը Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց, թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Շուշուայ գաւառի Խնուշինակ գիւղի բնակիչ Արտաշես Տէր Գրիգորեանցին և առաջադրել թեմի ժամ. կառավարչին ձեռնադրել տալ նրան նոյն գիւղի եկեղեցու համար սարկաւագ։

14 յունիսի, թ. 312. Սինոդը Վրաստանի հ. կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ախալքալակի գաւառի Բարալէթ գիւղի բնակիչ Ռուբէն Տէր-Կարապետեանին, և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան յիշեալ գիւղի համար քահանայ նորա ծերացած հօր փոխարէն։

19 յունիսի, թ. 322. Սինոդը՝ Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Մոզդոկի ս. Գէորգ եկեղեցու ծխականներին ընդունել որպէս նուէր նոյն եկեղեցու օգտին Կարապետ Նաւասարդեանի քաղաքային վարչութիւնից կապալով վերցրած 2 կտոր հողը՝ մինչև պայմանաժամը լրանալն օգտուելու համար՝ նուիրաբերողի առաջարկած պայմաններով, և բացատրել կոնսիստորիային, որ անշարժ կայքից օգտուելու համար անհրաժեշտ չէ նախարարի թոյլտուութիւնն ստանալ, այլ պէտք է առաջնորդուել օր. X հտ. | մ. 402 և 984 յօդուածներով։

21 յունիսի, թ. 329. Սինոդը՝ մարմնաւոր իշխանութիւնից պատշաճ թոյլտուութիւն ստանալով, որոշեց. պատուիրել Երևանի կոնսիստորիային կարգադրել մկրտել Հայաստանեայց եկեղեցու ծիսով Օլթիի շրջանի Ճուրճուրիա գիւղի վերաբնակիչ Ահմեդ Աբդուլլահին։

21 յունիսի, թ. 332. Սինոդը կալուածոց կառավարիչ Լ. Տէր Աւետիքեանի զեկուցման համաձայն որոշեց. թոյլ տալ Վրաստանի կոնսիստորիային ընդունել Գանձակեցի Նիկողայոս Մամիկոնեանի նոյն քաղաքում ունեցած Երուսաղէմապատկան խանութի նորան պատկանող 1/8 մասը, որպէս նուէր յօգուտ ս. Էջմիածնի։

24 յունիսի, թ. 338. Սինոդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Աղէքսանդրոպոլի գաւառի Ղազարապատ գիւղի բնակիչ Մատթէոս Տէր-Միքայէլեանին, և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն Ղազարապատ գիւղի համար։

24 յունիսի, թ. 340. Սինոդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Էջմիածնի գաւառի Ղուրդուզուլի գիւղի բնակիչ Աշոտ Եահնազարեանին, և առաջադրել փոխ թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի համար։

24 յունիսի, թ. 341. Սինոդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Կարսի շրջանի Փալտրուան գիւղի բնակիչ Սարգիս Սարգսեանին, և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։

28 յունիսի, թ. 347. Սինոդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Աղէքսանդրոպոլի գաւառի Բուղդաշէն գիւղի բնակիչ Գրիգոր Յովհաննիսեանին, և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։

28 յունիսի, թ. 349. Սինոդը Նորին Սրբութեան մակագիր պատուէրի համաձայն որոշեց. պատուիրել Մ. Ամոռի

գանձապահին փոխադրել Պետերբուրգի ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու ծխական հոգաբարձութեանը մի հազար հինգ հարիւր ռուբլի եկեղեցական և դպրոցական այն գումարից, որ փոխարքայի դիւանատունը 1908 թ. № 15835 գրութեամբ փոխադրել է Սինօդի անունով:

# ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶԸ.

*Իբրև իշխանութեամբ ուսուցանէր և ոչ որպէս դպիրքն նոցա:*
Մատթ. է, 29.

Լեռան քարոզի ընդունելութիւնը շատ տարբեր է եղել այլ և այլ ժամանակներում: Գրեթէ ամենքն էլ հիացել ու բարձր գնահատման արժանի են համարել այս քարոզը, թէպէտև ամեն որ իւր տեսակէտից: Այսօր ևս "ամենաազատ խորհողներն անգամ համամիտ են եկեղեցական ուղղութեան հետևող ամենախիստ պահպանողականներին այն խնդրում, որ Յիսուսի այս քարոզն իրօք աննման է, ճշմարտապէս աստուածային խօսք և լաւագոյն բարոյական ուղեցոյց ամբողջ մարդկութեան համար: Եւ սակայն հէնց այս միակ կէտումն էլ վերջանում է տարբեր ուղղութեանց ներկայացուցիչների ամբողջ համաձայնութիւնը: Եկեղեցականները յանդիմանում են ազատախոհներին, որ սոքա ամբողջ Նոր-Կտակարանից լոկ Լեռան քարոզն են ընդունում ու խոստովանում, իսկ վերջիններս՝ թէ Նոր-Կտակարանի մնացած մասն ուղղակի խանգարիչ, հեղձուցիչ ու սպանիչ է Լեռան քարոզի վճիտ ու վսեմ գաղափարների համար: Այս ուղղութիւններից մէկի համար Լեռան քարոզը զուգորդուած է Աստուածորդու գաղափարի հետ մինչդեռ